# ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

## Ի՞ՆՉ ՄՆԱՑ

*(Հերմանիմաս Լորմից.)*

*Աստղերն ինձ առաջ սփռում էին լոյս,*
*Եւ վարդերն շրջով զարդարում ուղիս,*
*Սակայն եւ քիչ էլ ես չեմ ողբացել:*
*Վաղուց այն քնքուշ վարդեր թոշնեցան*
*Էլ աստղեր չկան — արցունքներ միայն*
*Իմ մութ աչքերից հոսում են այժմ էլ:*

* * *

*(Նադսօնից.)*

*Ճակատըս սեղմած տաք տաք ձեռքերով,*
*Լայնարձակ բացուած պատուհանի մօտ,*
*Տանջուելով մինակ, յոգնած աչքերով*
*Ես խաւարի մէջ նայում եմ թախծոտ...*
*Թաւիշ երկնքի կապոյտ անդնդում*
*Փայլող աստղերին թիւ. համար չկայ...*
*Թեթեւ հառաչքով գիշերն է շնչում*
*Հասուն ցորենի ծփանքի վերայ:*
*Խոր եւ անսահման լռութեան գրկում*
*Չէ լսվում եւ ոչ էլ մի շարժմունք,*
*Իսկ իմ խեղճ կրծքում, իմ յուզուած կրծքում*
*Ամպրոպ եւ մրրիկ, տանջանք եւ արցունք...*

* * *

*(Հէյնէից.)*

*Շուշանը պայծառ ջրերի միջից*
*Լուռ եւ մտախոհ նայեցաւ երկինք,*
*Եւ տեսաւ որ վառ լուսնեակն այն տեղից*
*Դրկում է իրեն սիրոյ ողջունիկ:*

*Նա, ամաչելով նորա հայեացքից,*
*Գլուխը երերուն ջրի վերայ կախեց.*
*Բայց նոյն գունաթափ լուսնեակը նորից*
*Իւր ոտների տակ դողալով փռուեց:*

* * *

*(Մերեժկովսկուց.)*

*Սեւ եղեւիններն աւազի վերայ*
*Ձգեցին մըթին, անսովոր ստուերներ.*
*Հովը, մտախոհ յեղգութեամբ լցուած,*
*Ծալեց հանդարտիկ իւր կիզիչ թեւեր:*

*Ծովը հազիւ հազ արձակում է շունչ,*
*Նիրհում է երկինքն ալիքի գրկում*
*Եւ սուրբ անդորրի խաղաղիկ փշման*
*Հոգնած, վաստակած իմ սիրտս է անսում:*

*Նոր-Նախիջեւան:*

ՈՆՈՓՐԻՈՍ ԱՆՈՓԵԱՆ.

# ԱՅԼԵՒԱՅԼՔ

## ՆՈՐԱԼՈՒՐՔ

*Նիցցայի վարդաստանը:*

"Նիցցայի մօտերը համբաւաւոր վարդաստան մը կայ, որ ճիշդն ըսելով կարծես վարդի գործարան է, եւ Վարի եզերաց մեծ մասը բռնած է։ Այս տեղ կը մշակուին ձմեռուան վարդեր, որ բոլոր Եւրոպիոյ մէջ կը վաճառուին։ Նիցցայի կլիման այնչափ տաք չըլլալով՝ ջերոցներ շինուած են ծաղկանց, որոնք 6000 չորեքկուսի մեդր տեղ կը բռնեն։ Ասոնց քով բաց օդոյ մէջ կը մշակուին գարնան ու ամառուան անթիւ վարդեր, որոնք կը պահուին նաեւ ջերմանոցներու մէջ, բայց այնպէս որ ըստ պարահի ջերմարանաց պատերը կրնան մէկդի առնուիլ, եւ կը մնայ վրան միայն ապակէտանիքը, որ փոթորկայոյզ անձրեւէ կը պաշտպանէ։ Այս վարդաստանի տէրը՝ Mari անուն՝ Դեկ. 15էն մինչեւ Ապրիլ 15 օրական 500 երկոտասանեակ վարդ կը խաւրէ չորս կողմը, որոնցմէ ոմանք չափազանց մեծ են՝ մինչեւ 12 սնդ. տրամագծով։ Այս վարդերու ածուները գրեթէ 4 հեքտար տեղ կը բռնեն, որոնք իբր 50.000 ֆր. զուտ շահ կը բերեն տարեկան։

## ՏՆՏԵՍԱԿԱՆ

*Ճերմակեղէններէ խողը հանել:*

Առ 20—30 կրամ փոշիացած բորաքս եւ եռացած կէս լիտր ջրոյ մէջ լուծէ, եւ յետոյ այս հեղուկը քիչ մը պաղելէն վերջը՝ գաւաթներու մէջ լեցուր՝ ի հարկաւորութեան գործածելու համար։ Բորդեայ նիւթերէ բծերը հանելու համար ամէնէն ազդու միջոցն է այս։

## ՄԱՆՐԱԼՈՒՐՔ

*Նորանշան ընտանի անասուններ:*

Ձիերն եւ արջառն անհրաժեշտ կարեւոր եւ օգտակար են մեզ, սակայն չէ հաստատուած թէ ուրիշ երկիրներու անասունները մեզի մեծամեծ օգուտներ չմատուցանեն, եթէ զանոնք մեր օդաբաժնին վարժեցընենք։ Արդէն իսկ բազմաթիւ փորձեր եղած են պաղ կլիմայի մէջ բնակող արագընթաց եղջերուն (cervus tarandus) ջերմագոյն գաւառաց մէջ մուծանելու, սակայն դեռ ցայսօր չէ յաջողած։ Արագընթաց եղջերուն երկակճղակաց մէկ տեսակն է, որ առ Լապլանտացիս իբր ընտանի անասուն մեծ յարգ ունի։ Արագընթաց եղջերուն ոչ միայն կաթ եւ միս կը մատակարարէ, այլ նաեւ իբրեւ բեռնակիր եւ կառաձիգ անասուն մեծ առաւելութիւն ունի։ Գրեթէ միայն մամռով եւ մնկերով կը սնանի, զորոնք բաց օդոյ մէջ կը գտնէ։

digitised by A.R.A.R.@